|---|---|---|---|---|---|
| *18/H01* | *Օտար լեզու /Անգլերեն1/* | *0* | *12/0/0* | *I* | *Ստուգարք* |
| *18/H01* | *Օտար լեզու/Անգլերեն2/* | *0* | *12/0/0* | *I I* | *Ստուգարք* |
| *18/H02* | *Օտար լեզու /Գերմաներեն1/* | *0* | *12/0/0* | *I* | *Ստուգարք* |
| *18/H02* | *Օտար լեզու/Գերմաներեն2/* | *0* | *12/0/0* | *I I* | *Ստուգարք* |
| *18/H03* | *Օտար լեզու /Ֆրանսերեն1/* | *0* | *12/0/0* | *I* | *Ստուգարք* |

[8] Այսուհետ՝ դ – դասախոսություն, գ – գործնական կամ սեմինար պարապմունք, *լ* – լաբորատոր աշխատանք:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| *18/H03* | *Օտար լեզու/Ֆրանսերեն2/* | *0* | *12/0/0* | *II* | *Ստուգարք* |
| *06/H35* | *Պետության և իրավունքի տեղսություն* | *0* | *12/0/0* | *I* | *Ստուգարք* |

### 2.1.2. Ընդհանուր դասընթացներ

Ընդհանուր կրթամասի աշխատածավալը 9 կրեդիտ է: Ընդհանուր դասընթացների առկայությունը ծրագրում նպատակաուղղված է ուսանողների մոտ փոխանցելի գիտելիքների և կարողությունների, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիական ունակությունների և մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումն ապահովելուն: Այն ներառում է երեք պարտադիր դասընթաց՝ *«Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում», «Հաշվապահական հաշվառում և աուդիտի հիմունքներ», և «Իրավունքի փիլիսոփայություն»:* Առանձին դեպքերում, մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, մասնագիտական պարտադիր դասընթացներին հատկացված ժամաքանակի հաշվին հնարավոր է նաև ընդհանուր այլ դասընթացների ընդգրկումը:

| **Թվանիշ** | **Մոդուլ-դասընթաց** | **Կրե-դիտ** | **Լսարանային ժամ (դ/գ/լ)** | **Կիսամ-յակ** | **Գնահատ -** |
|---|---|---|---|---|---|
| *05/H02* | *Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում* | *3* | *12/0/0* | *III* | *Քննություն* |
| *16/H02* | *Իրավունքի փիլիսոփայություն* | *3* | *12/0/0* | *I* | *Քննություն* |

### 2.1.3. Մասնագիտական պարտադիր դասընթացներ

Մասնագիտական պարտադիր կրթամասը կարող է ընդգրկել 8-ից մինչև 16՝ երեքից վեց կրեդիտատարությամբ մոդուլ-դասընթաց: Կրթամասի ընդհանուր աշխատածավալը ծրագրում սահմանված է 54 կրեդիտ: Սա մագիստրոսական ծրագրի պարտադիր դասընթացների կազմն է, որն ապահովում է տվյալ մասնագիտացմամբ մագիստրոսի կրթական մակարդակում պահանջվող գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով մասնագիտական աշխատաշուկայի արդի կարիքները և պահանջմունքները:

Մագիստրոսական ծրագիր՝
**«Իրավագիտություն»**

| Թվանիշ | Մոդուլ-դասընթաց | Կրե-դիտ | Լսարանային ժամ (դ/գ/լ) | Կիսամ-յակ | Գնահատ-ման ձևը |
|---|---|---|---|---|---|
| *06/H01* | *Համեմատական սահմանադրակա նիրավունք* | *4* | *12/0/0* | *I* | *Քննություն* |
| *06/H15* | *ՀՀ մաքսային իրավունք* | *3* | *12/0/0* | *III* | *Քննություն* |
| *06/H03* | *Սահմանադրական վերահսկողությունը ՀՀ-ում* | *3* | *12/0/0* | *III* | *Քննություն* |
| *06/H17* | *Մարդու իրավունքների պաշտպանությունը Եվրոդատարանում* | *4* | *12/0/0* | *II* | *Քննություն* |
| *06/H06* | *Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթ* | *3* | *12/0/0* | *III* | *Քննություն* |
| *06/H08* | *ՀՀ և արտասահմանյան երկրների դատական համակարգեր* | *3* | *12/0/0* | *III* | *Քննություն* |
| *06/H09* | *Իրավունքի աղբյուրների տեսագործնական հիմնախնդիրներ* | *3* | *12/0/0* | *I* | *Քննություն* |
| *06/H10* | *Քաղաքացիական ծառայության իրավական կարգավորումը ՀՀ-ում* | *4* | *12/0/0* | *I* | *Քննություն* |
| *06/H11* | *Գործադիր իշխանության ինստիտուտը պետական իշխանության համակարգում* | *3* | *12/0/0* | *II* | *Քննություն* |
| *06/H19* | *ՀՀ գործարարական իրավունք* | *4* | *12/0/0* | *I* | *Քննություն* |
| *06/H23* | *ՀՀ ազգային անվտանգության իրավական և ռազմավարական հիմունքները* | *4* | *12/0/0* | *II* | *Քննություն* |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| *06/Н33* | *Իրավաբանական գրագրություն* | *3* | *12/0/0* | *II* | *Քննություն* |

### 2.1.4. Կամընտրական դասընթացներ

Կամընտրական դասընթացներն ընտրվում են Կենտրոնի այլ մագիստրոսական ծրագրերի դասընթացներից և նպատակ ունեն մագիստրանտի մոտ ձևավորելու մագիստրոսական թեզը հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ: Այս դասընթացների ընդհանուր աշխատածավալը ծրագրում սահմանափակված է 9 կրեդիտով, իսկ կազմն ընտրվում է ուսումնական խորհրդատուի (գիտական ղեկավարի) հետ համատեղ՝ տվյալ կամ հարակից (մասնագիտության շրջանակներում միջդիսցիպլինար կապերի ձևավորման նպատակով) մագիստրոսական ծրագր(եր)ի դասընթացների ցանկից՝ 2÷4-րդ կիսամյակների ընթացքում: Տվյալ ծրագրի կամընտրական դասընթացներից ընտրվող դասընթացների ընդհանուր աշխատածավալը պետք է կազմի առնվազն 9 կրեդիտ, իսկ առաջարկվող դասընթացների քանակը՝ պահանջվածից առնվազն 2 անգամ ավելի:

Կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երեքը:

Մագիստրոսական ծրագիր՝
**«Իրավագիտություն»**

| Թվանիշ | Մոդուլ-դասընթաց | Կրեդիտ | Լսարանային ժամ (դ/գ/լ) | Կիսամյակ | Գնահատման ձևը |
|---|---|---|---|---|---|
| *15/Н48* | *Հաշվապահական հաշվառում և աուդիտի հիմունքներ* | *3* | *12/0/0* | *III* | *Քննություն* |
| *06/Н07* | *ՀՀ ընտրական իրավունք և համակարգեր* | *3* | *12/0/0* | *III* | *Քննություն* |
| *06/Н14* | *ՀՀ հարկային իրավունք* | *3* | *12/0/0* | *II* | *Քննություն* |
| *06/Н02* | *Պառլամենտական իրավունք* | *3* | *12/0/0* | *II* | *Քննություն* |

## 2.2. Հետազոտական կառուցամաս

Ծրագրի հետազոտական կառուցամասը ներառում է հետևյալ բաղադրիչները՝

***գիտական սեմինար, գիտահետազոտական աշխատանք, գիտահետազոտական պրակտիկա, գիտամանկավարժական պրակտիկա*** և ***մագիստրոսական թեզ:***

***Գիտական սեմինարը*** ծրագիրն իրականացնող կառույցի (գիտական կազմակերպություն, ամբիոն, կենտրոն և այլն) կողմից կազմակերպվող կանոնավոր գործող սեմինարների շարք է, որի անցկացման ժամանակացույցը սահմանվում է մագիստրոսական ծրագրի տվյալ կիսամյակի դասացուցակով: Գիտական սեմինարի ընթացքում մագիստրանտներին ցուցաբերվում է գիտական հետազոտություն կատարելու մեթոդաբանական և մեթոդական աջակցություն, ձևավորվում են գիտական սեմինարներին հաղորդումներ և զեկուցումներ ներկայացնելու, գիտական բանավեճ վարելու, գրախոսություններով հանդես գալու հմտություններ: Կազմակերպվում է ուսումնառության բոլոր 4 կիսամյակներում:

***Գիտահետազոտական աշխատանքի*** բովանդակությունը պայմանավորվում է ուսանողի մագիստրոսական թեզի թեմայի խնդիրներով և կազմվում է գիտական ղեկավարի հետ համատեղ: Այն ևս կազմակերպվում է ուսումնառության բոլոր կիսամյակներում:

***Գիտահետազոտական պրակտիկան*** կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող է իրականացվել ամբիոնի կամ լաբորատորիայի գիտական թեմաների շրջանակներում: Ունի 3 կրեդիտ աշխատածավալ:

***Մագիստրոսական թեզի*** կատարումը և նրա պաշտպանությունը մագիստրոսի կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որն իրականացվում է 4-րդ կիսամյակում: Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 15 կրեդիտ աշխատածավալ:

# Մաս II.

## ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

## 1. ՏԵՂԵԿԱԳՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ

*Դասընթացների տեղեկագիրքը* նախատեսված է «Իրավագիտություն» ամբիոնում հեռակա ուսուցմամբ իրականացվող մագիստրոսի կրթական ծրագրի նույնանուն մասնագիտության վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես ուսումնական ծրագրի, այնպես էլ դրա բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջներն ու ամփոփիչ ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, , ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

## Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ

**05/H02. Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում** (3 կրեդիտ)

*Շաբաթական 4 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Moodle հեռաուսուցման հարթակում ուսուցանելու ընթացքում ստեղծել այնպիսի պայմաններ, որպեսզի ուսանողները ինքնուրույն ձեռք բերեն լրացուցիչ մասնագիտական գիտելիքներ, ձեռք բերած գիտելիքը կարող լինեն գրավոր և բանավոր խոսքով ներկայացնել, բարդությունները հնարավորինս հաղթահարել: Ծրագրի խնդիրներն են՝ ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին գիտելիքներ հաղորդել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման մասին, որի հետևանքով ուսանողը կկարողանա ավելի խորը հետազոտությունները կատարել իր ոլորտում:

Դասընթացն ընդգրկում է ինֆորմացիայի տեսակների նկարագրությունները՝ թվային, տեքստային, ձայնային, պատկերներ և տեսաշարեր և այլն: Թվային ինֆորմացիայի ներկայացում տարբեր թվային համակարգերում, մշակում, արտապատկերում ինֆորմացիայի այլ տեսակների միջոցով:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիմանա**
   - ԱՀ արտաքին և ներքին կառուցվածքը, ներքին սարքավորումների նպաակը:
   - Հիշողության տեսակներ և կազմակերպման ձևեր:
   - Windows 7, 8, 10 ՕՀ հիմնական տարրերը
   - Ֆայլային համակարգ
   - Աշխատանք պատուհանի հետ
   - Աշխատանք ֆայլերի հետ
   - Անվտանգություն
   - Ինտերնետ ցանցի ծառայություններից օգտվելու մեթոդներ:
   - Մասնագիտական կայքեր: Անվտանգություն:
   - Ամպային տեխնոլոգիաներ:

1. **Կկարողանա կատարել** MS Word 2010, MS Excel 2010, MS Power Point 2010 միջավայրերում
   - Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում:
   - Բանաձևերի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում
   - Օբյեկտների և գրաֆիկների կառուցում, մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում:

- Աղյուսակների կառուցում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում

2. **Կտիրապետեն**

- Ուսանողը կտիրապետի վերոհիշյալ բոլոր հիմնախնդիրներին վերաբերող գործիքատարրերին, ծրագրերին, մեթոդներին՝ առավելագույնս հմտորեն օգակար լինելու իր մասնագիտական ազպարեզում:
- Կտիրապետեն առկա հնարավորություններին և մեթոդներին հետնելու այս որորտի զանգացմանը և կիրառել իրենց մասնագիտական ոլորտում:

**Բովանդակությունը.**

| N | Բաժինը, թեման | Պարապունքների տիպը, ժամերի թիվը | | | Վերջնարդյունք |
|---|---|---|---|---|---|
| | | Դասախոսություն | Սեմինար, գործնական | Ինքնուրույն | |
| **Թեմա 1** | **MS Office Power Point** ծրագրում դրվագների ավելացում, ձևավորում, յուրաքանչյուր դրվագի համար անիմացիաների կարգավորում, դրվագներում օբյեկտների ներմուծում, ձևավորում, դրվագում յուրաքանչյուր օբյեկտի համար անիմացիաների կարգավորում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: | **2** | 1 | 20 | Մագիստրանտը կտիրապետի շնորհանդեսի կառուցման և ներկայացման հիմնական մեթոդներին |
| **Թեմա 2** | **MS Office Excel էլեկտրոնային աղյուսակում՝** բանաձևերի մուտքագրում, գրաֆիկների կառուցում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում: Հիմնական խնդիրների դիտարկում և լուծման մեթոդների պարզաբանում: | **2** | 1 | 20 | Մագիստրանտը կիմանա էլեկտրոնային աղյուսակների հետ աշխատանքի, հիմնական ֆունկցիաների, դրանց հիմնական սկզբունքները |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Թեմա 3** | **MS Office Word տեքստային խմբագրիչում՝** տեքստի մուտքագրում, խմբագրում, և ձևավորում: Աշխատանք աղյուսակների և օբյեկտների հետ (մասնավորապես՝ ներմուծել **MS Office Excel էլեկտրոնային** աղյուսակը, այլ ծրագրերի օբյեկտների ներմուծում): Մասնագիտական թեստեր և ռեֆերատների պատրաստում: Հոդվածներում, ռեֆերատներում հղումների ստանդարտների հետ աշխատել: Աղյուսակների, բանաձևեր,բովանդակություն,գրաֆիկներ, պատկերներ, հղումներ, համարակալում, թվարկում և այլն: | **2** | 1 | 18 | Մագիստրանտը կտարբերի ընտրական համակարգերը, կիմանա ցանկացած բարդության տեքստի մուտքագրում, խմբագրում: Անկախ նրանից տեքստը ինչ տեսակի օբյեկտներ է պարունակում: |
| **Թեմա 4** | **Համացանց, նամակներ, ամպային տեխնոլոգիաներ** | **2** | 1 | 20 | Մագիստրանտը կտիրապետի համացանցում անվտանք օգտվելու մեթոդների, նամակագրության կարևոր նրբությունների, ամպային տեխնոլոգիաների կիրառման մեթոդների; |
| **Ընդամենը՝ 90 ժամ, 3 կրեդիտ** | | | | | |

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,

- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| Քննության տեսակը | Միավոր |
|---|---|
| 1. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 2. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 3. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| Հաճախում | Միավոր |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

**16/H02. Իրավունքի փիլիսոփայություն** (3 կրեդիտ)

*Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է՝ իրավագետ մագիստրանտներին ծանոթացնել իրավունքի, օրենքի փիլիսոփայական ըմբռնումների և հայեցակարգի հետ, նրանց մեջ ձևավորել իրավունքի փիլիսոփայության պատմության իրավական հիմնահարցերի փիլիսոփայական հիմքերը տեսնելու, դրանք հասկանալու և վերլուծելու հետազոտական ունակություններ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կծանոթանա** և **պատկերացում կկազմի** անցյալի իրավագետ փիլիսոփաների տեսական ժառանգության մասին

**2. ձեռք կբերի** հիմնարար իրավագիտական հասկացությունների փիլիսոփայական հիմքերը ըմբռնելու և դրանք հետազոտելու ունակություններ

**3. կկարողանա ծանոթանալ** XX դ. իրավունքի փիլիսոփայության հիմնական հայեցակարգի հետ

**Բովանդակությունը.**

***Թեմա 1***՝ Իրավունքի փիլիսոփայությունը: ***Թեմա 2***՝ Ցիցերոնի իրավափիլիսոփայական հայացքները: Հռոմեական իրավագետները: ***Թեմա 3***՝ Ժան Բոդենի իրավափիլիսոփայական հայացքները: ***Թեմա 4***՝ Հուգո Գրոտիուսը որպես իրավական ռացիոնալիզմի հիմնադիր: ***Թեմա 5***՝ Թոմաս Հոբսի էտատիզմի փիլիսոփայությունը: ***Թեմա 6***՝ Ջոն Լոկը որպես իրավաբանական լիբերալիզմի հայրը: ***Թեմա 7***՝ Ֆրանսիական լուսավորիչների իրավափիլիսոփայական հայացքները (Մ. Վոլտեր): ***Թեմա 8***՝ Շառլ Լուի Մոնթեսքյոի իրավափիլիսոփայական հայացքների առանձնահատկությունները: ***Թեմա 9***՝ Ժան Ժակ Ռուսսոյի իրավափիլիսոփայական հայացքները: ***Թեմա 10***՝ Ի. Կանտի իրավափիլիսոփայական հայեցակարգը: ***Թեմա 11***՝ Գ. Ֆ. Հեգելի իրավափիլիսոփայական հայացքները: ***Թեմա 12***՝ Ամերիկյան իրավափիլիսոփայական միտքը (Բ. Ֆրանկլին, Թ. Ջեֆերսոն, Ռ. Համիլտոն և ուրիշներ): ***Թեմա 13***՝ Ֆրանսիական լիբերալիզմ (Բ. Կոնստան, Ա. Թոքվիլ): ***Թեմա 14***՝ Եվրոպական իրավապիլիսոփայական միտքը XIX դարի երկրորդ կեսին:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

***Եզրափակիչ քննություն***

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

## Լրացական դասընթացներ

**06/M37. Պետության և իրավունքի տեսություն** (0 կրեդիտ)

*Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, ստուգարք*

**Նպատակը.**

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրանտին ներկայացնել և ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել Պետության և իրավունքի տեսությունը որպես գիտություն, որն իր հերթին նպատակ ունի հետազոտել ու ձևակերպել պետության և իրավունքի զարգացման օրինաչափությունները: Պետության և իրավունքի տեսության որպես դասընթացի նպատակը գիտական հետազոտության արդյունք համարվող տեսական նյութը սովորողին մատչելի ձևով շարադրելն է: Ծրագրին ուսումնասիրելիս ուսանողը ձեռք կբերի տեսական գիտելիքներ, ուսումնական նյութերով ինքնուրույն աշխատելու, ինչպես նաև տեսական գիտելիքները գործնական հմտությունների հետ համադրելու ունակություններ

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիմանա**

պետական և իրավական ընդհանուր օրինաչափությունները, իրավագիտության մեթոդաբանական հիմունքները,

2. **կկարողանա**

ձևավորել իրավական աշխարհայացք և կողմնորոշում,

3. **կտիրապետի**

մասնագիտական արհեստավարժությանը. գործնական ունակություններ և հմտություններ վերլուծելու պետաիրավական կոնկրետերևույթները, ճիշտ կիրառել ստացված տեսական գիտելիքները:

**Բովանդակությունը.**

| N | Բաժինը, թեման | Պարապմունքի տիպը ժամերի թիվը | | |
|---|---|---|---|---|
| | | դասախոսություն | սեմինար, գործնական | ինքնուրույն |
| | ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ | 1 | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **ԹԵՄԱ 1** | **ԹԵՄԱ 1. Պետության և իրավունքի տեսության հետազոտման առարկան և դրա առանձնահատկությունները, գործառույթները, կապը պրակտիկայի հետ: Պետության և իրավունքի տեսությունը որպես գիտության հիմնական հատկանիշները և որպես դասընթաց նպատակները, խնդիրները, կառուցվածքը:** | 1 | | |
| | Թեմայի շրջանակում քննարկվում է Պետության և իրավունքի տեսության առարկան, նրա կարևորությունն ու դերը, կապը այլ գիտությունների հետ: Մեծ ուշադրություն է դարձվում կատարած գործառույթներին, խնդիրներին, ինչպես նաև Պետության և իրավունքի տեսության կառուցվածքին: | | | |
| **ԹԵՄԱ 2** | **ԹԵՄԱ 2. Մինչպետական հասարակություն, Պետության հասկացությունները, հատկանիշները: Պետության առաջացման ընդհանուր և առանձնահատուկ պատճառները (օրինաչափությունները) և ուղիները, պետության առաջացման տեսությունների բազմազանությունը, բնութագիրը:** | 1 | | |
| | Ներկայացվում է մինչև պետությունը գոյություն ունեցած տոհմերի, ցեղերի, գործող իրավանորմերի համակարգը, պետության առաջացման տեսությունները և վարկածները, ինչպես նաև պետության հասկացությունն ու նրա կարևորագույն տարրերը: | | | |
| **ԹԵՄԱ 3** | **ԹԵՄԱ 3. Պետության գործառույթներ հասկացությունը, բնութագրական գծերը, դասակարգումը, բովանդակությունը: Պետության գործառույթների իրականացման ձևերը և մեթոդները: Պետական իշխանության առանձնահատուկ գծերը, իրականացման եղանակները:** | 1 | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Սույն թեմայի շրջանակում քննարկման առարկա է դարձվում պետության և պետական իշխանության հարաբերակցությունը, պետական իշխանության իրականացման եղանակները ու մեթոդները, ինչպես նաև պետական իշխանությանը բնորոշ առանձնահատկություններին՝ չանտեսելով պետության բուն գործառույթները և լուծմանն ուղղված խնդիրները: | | | |
| **ԹԵՄԱ** 4 | **ԹԵՄԱ 4. Պետության ձև հասկացությունը և տարրերը: Պետության էության**, **տիպի և ձևի հարաբերակցությունը**: Քննարկվում է պետության կառուցվածքի ձևը, կառավարման ձևը և պետաիրավական վարչաձևը, յուրաքանչյուրն իր բազմակողմ դրսևորումներով: | 1 | | |
| **ԹԵՄԱ** 5 | **ԹԵՄԱ** 5. **Իրավունքի հասկացությունը հատկանիշները**, **նշանակությունը**, **հայեցակարգերը:** | 1 | | |
| | Ուսումնասիրվում է Իրավունքի հասկացությունը և հատկանիշները, գոյություն ունեցող իրավունքի վերաբերյալ հայեցակարգերը, իրավունքի ծագման և զարգացման ընդհանուր օրինաչափությունները: | | | |
| **ԹԵՄԱ** 6 | **ԹԵՄԱ** 6. **Իրավագիտակցության հասկացությունը**, **հատկանիշները**, **դերը /գործառույթները**/, **կառուցվածքը**, **տեսակները**, **մակարդակները: Իրավական դաստիարակություն**. **հասկացությունը**, **բաղադրատարրերը** Սույն թեմայի շրջանակում քննարկվում է իրավագիտակցության հասկացությունը, պարզաբանվում է անհատական և հասարակական իրավական մշակույթի հասկացությունը, կառուցվածքը: իրավագիտակցության մակարդակները, իրավական մշակույթը և իրավական դաստիարակության | 1 | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | հիմնահարցերը: | | | |
| **ԹԵՄԱ** 7 | **ԹԵՄԱ** 7. **Իրավահարաբերության կառուցվածքը** (**տարրերը**), **բնութագիրը**, **բովանդակությունը**, **ծագման նախադրյալները**: | 1 | | |
| | Թեմայի շրջանակներում վե է հանվում, թե ինչ է իրենից ներկայացնում իրավահարաբերությունը, ովքեր են դրանց մասնակիցները, սուբյեկտային կազմը, բովանդակությունը, ինչպես նաև ծագման համար հիմք հանդիսացող նախապայմանները: | | | |
| **ԹԵՄԱ** 8 | **ԹԵՄԱ** 8. **Իրավաչափ վարքագծի հասկացությունը**, **հատկանիշները**, **տեսակները:** | 2 | | |
| | Ուսումնասիրվում է անձի վարքագծի դրսևորումները՝ բաժանելով այն ակտիվի և պասիվի, նրա կողմից դրսևորվող վարքագիծը իրավաչափ համարելու հատկանիշները, տեսակների բաժանելու հիմնախնդիրը: | | | |
| **ԹԵՄԱ** 9 | **ԹԵՄԱ** 9. **Իրավախախտման հասկացությունը**, **հատկանիշները**, **տեսակները**, **իրավաբանական կազմը: Իրավական պատասխանատվության հասկացությունը**, **տեսակները**, **հատկանիշները**, **նպատակները և գործառույթները**, **հիմքերը**, **սկզբունքները:** | 1 | | |
| | Թեման տրամաբանական կապի մեջ է գտնվում նախորդ թեմայի՝ իրավաչափ վարքագծի հետ, որի հակապատկերն է իրավախախտումը, քննարկվում է իրավախախտման հասկացությունը, նրա | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | տեսակները, և կազմը: | | | |
| **ԹԵՄԱ** 10 | **ԹԵՄԱ** 10. **Իրավական օրինականության հասկացությունը, կառուցվածքը, սկզբունքները և պահանջները Իրավական օրինականության և իրավակարգի երաշխիքների հասկացությունը և տեսակները** Ամփոփ կերպով մատուցվում է օրինականության հասկացությունը, ինչպես նաև օրինականության և իրավական օրինականության հարաբերակցությունը: Թեմայի շրջանակում բացահայտվում է նաև օրիանականության հաստատման գաղափարի էությունը և վերջարդյունքը՝ իրավակարգը: | 2 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ 12 ժամ, 0 կրեդիտ | | | | |

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- գնահատման ձևեր՝ բանավոր ներկայացում:

**18/M01. Մասնագիտական օտար լեզու** (**անգլերեն-1, 2**) (0 կրեդիտ)
*Շաբաթական 2 ժամ, 1-ին և 2-րդ կիսամյակ, ստուգարք*

**Նպատակը.**

զարգացնել ուսանողների մասնագիտական բանավոր և գրավոր խոսքը, խորացնելու և ընդլայնելու լեզվական և արտալեզվական գիտելիքները, ընդլայնելու մասնագիտական բառապաշարը, մասնագիտական թեմատիկ տեքստերը կարդալու և յուրացնելու հմտությունները: Մասնագիտական օտար լեզվի ուսուցումը ենթադրում է ուսուցման բովանդակության համապատասխան ընտրություն, որով և պայմանավորվում է բառային ու քերականական միավորների, ինչպես նաև հաղորդակցման միջոցների գործածությունը: Այն խթանում է ուսանողների՝ անգլերենով շփվելու, մասնագիտական ոլորտում գիտելիքները գործնականում կիրառելու հնարավորությունը:

**Կրթական արդյունքները.**

**1. Կիմանա**

թեմատիկ բառապաշարը, հոմանիշային շարքերը, կայուն բառակապակցությունները, լեզվական տարբեր իրավիճակներին բնորոշ ոճերը

**2. Կկարողանա**

- Ընթերցել, հասկանալ, վերլուծել բնագրային մասնագիտական տեքստը
- Քննարկել թեման՝ օգտագործելով նոր թեմատիկ մասնագիտական բառապաշարը
- Ճիշտ համատեքստում օգտագործել իրավաբանական եզրույթները և կայուն բառակապակցությունները
- Լսել և հասկանալ լսածի հիմնական միտքը և մասնագիտական տեղեկատվությունը, ինչպես նաև վերարտադրել և վերլուծել լսածը նյութը
- Կարդալ և վերարտադրել մասնագիտական հոդված և նյութ

**3. Կտիրապետեւ**

- Թեմատիկ մասնագիտական նոր բառապաշարին
- Լեզվակրի խոսքը լսելու և ըմբռնելու, լսած տեքստը վերլուծելու և վերարտադրելու հմտություններին ու ունակություններին

**Բովանդակությունը.**

| N | Բաժինը, թեման | Պարապմունքների տիպը, ժամերի թիվը | | | Վերջնարդյունք |
|---|---|---|---|---|---|
| | | Դասախոսություն | Սեմինար, գործնական | Ինքնուրույն | |
| **Թեմա 1** | Հայտորոշիչ գնահատում | | 2 | | խմբի լեզվական գիտելիքների, հմտությունների և արժեքների մակարդակի որոշում |
| | | | | | |
| **Թեմա 2** | Legal Profession, Adjectives for Law<br>Book: Check Your Vocabulary for Law, a workbook for users<br>https://www.youtube.com/watch?v=ClOenRSdPQA | | 1 | | մասնագիտական բառապաշարի զարգացում |
| | | | | | |
| **Թեմա 3** | Crimes: Matching Activities, Name the Crime<br><br>Vocabulary Game: Guess the | | 2 | | մասնագիտական բառապաշարի զարգացում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Crime | | | | |
| | | | | | |
| **Թեմա 4** | Useful Verbs in Law (Past Tense and Mixed Tenses) | | 2 | | մասնագիտական բառապաշարի զարգացում |
| | | | | | |
| **Թեմա 5** | Adjectives for Law – 2; Word Associations<br><br>Opposites in Law, Word Associations 2 | | 1 | | մասնագիտական բառապաշարի զարգացում բանավոր խոսքի հմտությունների զարգացում, |
| | | | | | |
| **Թեմա 6** | Գրավոր թեստ և բանավոր հարցազրույց | | 2 | | մասնագիտական բառապաշարի զարգացում բանավոր խոսքի հմտությունների զարգացում |
| | | | | | |
| **Թեմա 7** | **Ստուգարք** | | 2 | | մասնագիտական բառապաշարի տիրապետման մակարդակի ստուգում |
| | | | | | |
| **Թեմա 8** | Employment Law: Part 1 | | 2 | | մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտություններ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ի զարգացում, |
| | | | | | |
| **Թեմա 9** | Employment Law: Part 2 | | 1 | | մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, |
| | | | | | |
| **Թեմա10** | The Subject Matter of the Legal System<br><br>Book: Professional English, Law, Nick Brieger, 2002 | | 2 | | մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, |
| | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Թեմա 11** | Court Structure in England and Armenia<br>Prepositions in Law<br>https://www.englishcentral.com/video/15888/three-different-types-of-court | | 1 | | մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, թեմատիկ ունկնդրում և մեկնաբանում, |
| | | | | | |
| **Թեմա 12** | Prepositions at Law, Introduction to the Law of Contract, | | | | մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, |
| | | | | | |
| **Թեմա 13** | Բանավոր հարցազրույց | | 2 | | մասնագիտական բառապաշարի տիրապետման մակարդակի ստուգում. բանավոր խոսքի հմտությունների զարգացման մակարդակի ստուգում |
| | | | | | |

| Թեմա 14 | Ստուգարք | | 2 | | մասնագիտական բառապաշարի տիրապետման մակարդակի ստուգում. բանավոր խոսքի հմտությունների զարգացման մակարդակի ստուգում |
|---|---|---|---|---|---|
| Ընդամենը՝ 24 ժամ, 0 կրեդիտ | | | | | |

**Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ մեկ ստուգում, ստուգարք, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 4. Միջանկյալ ստուգում | 0-6 |
| 5. Ստուգարք | 0-7 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն, որից<br>Դասահաճախում՝<br>Ակտիվություն՝ | 0-7<br>0-3.5<br>0-3.5 |

**18/M03. Մասնագիտական օտար լեզու** (**Ֆրանսերեն-1, 2**) (0 կրեդիտ)
*Շաբաթական 2 ժամ, 1-ին և 2-րդ կիսամյակ, ստուգարք*

**Նպատակը.**

երկու կիսամյակ տևողությամբ ուսումնական գործունեության ընթացքում ուսանողները ուսուցանելու են ֆրանսերենը, որպես մասնագիտական լեզու, որն իր մեջ ներառում է քորականական ժամանակաձևերի, կառուցվածքների ուսումնասիրում և ամրապնդում՝ նախապես մշակված վարժությունների և թեմատիկ նյութերի միջոցով, համապատասխան մասնագիտական տերմինների, բառերի ու արտահայտությունների ուսումնասիրում և տիրապետում՝ համապատասխան տեքստերի միջոցով, տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառում՝ օգնելու ուսանողներին զրգացնելու խոսքի

հմտություններնու կարողությունները: Ծրագրի շրջանակներում նախատեսված է ուսանողներին ծանոթացնել լեզվի ուսումնասիրման հետ կապված խնդիրներին, նպատակներին, սկզբունքներին, ինչպես նաև հմտություններին՝ ինչպես հաղթահարել ուսուցման ընթացքում ծառացած խնդիրներն ու դժվարությունները:

Դասընթացների միջոցով ուսանողները ձեռք կբերեն ֆրանսերեն լեզվի տեսական և գործնական գիտելիքներ, որը կնպաստի նրանց հետագա մասնագիտական գործունեությանը:

**Կրթական արդյունքները.**
Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **Կիմանա**

- Քերականական ժամանակաձևերի, կառուցվածքների ճիշտ օգտագործման ձևերն ու ուղիները,
- Մասնագիտական անհրաժեշտ բառապաշար և տերմիններ, որոնք ուսանողներին կօգնեն կարդալ և հասկանալ մասնագիտական տեքստեր,
- Մասնագիտական բառարաններից և ձեռնարկներից արդյունավետ օգտվելու եղանակները,
- Համապատասխան մեթոդիկա՝ մասնագիտական տերմինների և բառապաշարի մտապահման և ամրապնդման համար;
- Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառում

2. **Կկարողանա**

- Խոսել, հարաբերվել ֆրանսերենով՝ կիրառելով մասնագիտական տերմինների և անհրաժեշտ պաշար,
- Լսել, հասկանալ և վերլուծել ֆրանսերեն տեքստեր;
- Մասնակցել քննարկումների կամ երկխոսությունների;
- Օգտվել ֆրանսերեն լեզվով մասնագիտական գրականությունից՝ խորացնելով մասնագիտական գիտելիքները;
- Արդյունավետորեն կիրառել բառարաններ;
- Պատրաստել պրեզենտացիաներ, զեկույցներ

3. **Կտիրապետի**

- Ֆրանսերեն լեզվի տեսական և գործնական գիտելիքներին;
- Ֆրանսերեն լեզվին /բավարար, միջին կամ ավելի բարձր մակարդակով՝ կախված ուսանողի անհատական ունակություններից/;
- Մասնագիտական տերմինների, կապակցությունների, արտահայտությունների;

- Քերականական ժամանակաձևերին և կառուցվածքներին;
- Օտար լեզուն ուսումնասիրելու մեթոդիկային

**Բովանդակությունը.**

| N | Բաժինը, թեման | Դասընթացի տեսակը, ժամաքանակը | | |
|---|---|---|---|---|
| | | գործնական | Նախագիծ, Ինքնուրույն աշխատանք | ստուգում |
| I Կիսամյակ | | | | |
| Թեմա 1 | Ներածություն | 2 | | |
| Թեմա 2 | La phrase française / L'article | 1 | | |
| Թեմա 3 | Verb du I groupe / pluriel des noms | 2 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Թեմա 4 | L'absence de l'article / Question sur le sujet | 1 | | | |
| Թեմա 5 | Adjectifs possessifs / L' article Défini | 2 | | | |
| Թեմա 6 | Forme négative du verbe / Le Féminin des noms | 2 | | | |
| Թեմա 7 | Գիտելիքի ստուգում (I փուլ) | | | 2 | |
| Թեմա 8 | Նախագիծ | | 1 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| Թեմա 9 | Verb du III groupe / L’emploi de l’aticle | 1 | | | |
| Թեմա 10 | L'article contracté / pronoms personnels - le, la, les | 2 | | | |
| Թեմա 11 | L'article défini / prépositions à, de | 2 | | | |
| Թեմա | Pluriel des verbes / pronrom indéfini | 2 | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 12 | | | | | |
| Թեմա 13 | La conjugaison des verbes du I groupe | 2 | | | |
| Թեմա 14 | La conjugaison du verbe “aller” / Verbes du III groupe | 2 | | | |
| Թեմա 15 | Նախագիծ | | 1 | | |
| Թեմա | Եզրափակիչ ստուգարք | | | 2 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 16 | | | | | |
| II Կիսամյակ | | | | | |
| Թեմա 1 | Adverbes “en” “y” / pronom “en” / “ Le 14 Juillet” (I partie) | 2 | | | |
| Թեմա 2 | “ Le 14 Juillet” (II partie) (c’est, cesont) | 2 | | | |
| Թեմա 3 | “La Marsseillaise” (questionnaire) | 1 | | | |
| Թեմա 4 | “Une année scolaire” (I partie) | 2 | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| Թեմա 5 | “Une année scolaire” (II partie) | 2 | | | |
| Թեմա 6 | “De la maternelle à l’université” | 2 | | | |
| Թեմա 7 | Գիտելիքի ստուգում (II փուլ) | | | 2 | |
| Թեմա 8 | Նախագիծ | | 1 | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| Թեմա 9 | “Un cours de français (grammaire)” (I Partie) | 2 | | |
| Թեմա 10 | “Un cours de français” (II Partie) | 2 | | |
| Թեմա 11 | “ Une class d’ histoire” | 2 | | |
| Թեմա 12 | “ Paul va au lycée” (texte complémantaire) | 2 | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| Թեմա 13 | " Une promenade à travers Paris" (I Partie) / passé composé | 2 | | |
| Թեմա 14 | " Une promenade à travers Paris" (II Partie) | 2 | | |
| Թեմա 15 | Նախագիծ | | 1 | |
| Թեմա 16 | Եզրափակիչ ստուգարք | | | 2 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| Ընդամենը 24 ժամ | | | | |

**Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 6. Առաջին միջանկյալ | 0-6 |
| 7. Եզրափակիչ քննություն | 0-7 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-7 |

**18/M02. Մասնագիտական օտար լեզու** (**գերմաներեն-1, 2**) (0 կրեդիտ)

*Շաբաթական 2 ժամ, 1-ին և 2-րդ կիսամյակ, ստուգարք*

**Նպատակը.**

Երկու կիսամյակ տևող ուսումնական գործունեության ընթացքում ուսանողներին ուսուցանել մասնագիտական գերմաներեն, որը ներառում է համապատասխան մասնագիտական եզրույթների և արտահայտությունների, քերականական կառույցների, ժամանակաձևերի ուսումնասիրում և տիրապետում, մեթոդական կողմնորոշիչ ցուցումներ՝ձեռք բերված գիտելիքն ամրապնդելու և վերարտադրելու, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում՝ օգնելու սովորողներին զարգացնել խոսքային հմտություններն ու կարողությունները: Դասընթացը ենթադրում է նաև լրացուցիչ մասնագիտական և ոչ մասնագիտական տեքստերի ուսումնասիրություն, ինքնուրույն աշխատանք:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **Կիմանա**

- գերմաներենի ժամանակաձևերը, քերականական կառուցվածքները, մասնագիտական հիմնական բառապաշարը
- գերմաներենի իմացության խորացմանը նպաստող անհրաժեշտ ուսումնական ձեռնարկների, դասագրքերի արդյունավետ օգտագործման ձևերն ու եղանակները,

- համապատասխան մեթոդներ՝ մասնագիտական եզրույթների և բառապաշարի մտապահման և ամրապնդման համար,
- տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման ձևերը

2. **Կկարողանա**

- ճիշտ օգտագործել ժամանակաձևերն ու կառույցները
- օգտվել գերմաներեն մասնագիտական գրականությունից, մեթոդական ուղեցույցներից՝ խորացնելու մասնագիտական գիտելիքը,
- արդյունավետ օգտագործել բառարանները,
- պատրաստել ներկայացումներ , զեկուցումներ,
- խոսել գերմաներեն՝ կիրառելով մասնագիտական եզրույթների և արտահայտությունների անհրաժեշտ պաշար,
- լսել և հասկանալ գերմանալեզու տեքստեր,
- մասնակցել բանավոր քննարկումների, բանավեճերի, երկխոսությունների:

3. **Կտիրապետի**

- քերականական կառույցներին և ժամանակաձևերին,
- գերմաներենի տեսական և գործնական գիտելիքին,
- գերմաներեն խոսակցական լեզվին /բավարար, միջին կամ ավելի բարձր մակարդակով՝ կախված ուսանողների ընդունակություններից/,
- մասնագիտական տերմինաբանությանն ու բառապաշարին,

գերմաներենից հայերեն և հայերենից գերմաներեն մասնագիտական և ոչ մասնագիտական տեքստերի թարգմանական տեխնիկային

**Բովանդակությունը.**

| N | Բաժինը, թեման | Պարապունքների տիպը, ժամերի թիվը | | | Վերջնարդյունք |
|---|---|---|---|---|---|
| | | Դասախոսություն | Սեմինար, գործնական | Ինքնուրույն | |
| **Թեմա 1** | **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** | | 1 | | Ներկայացնել դասընթացի ծրագիրը և նպատակները, ստուգել ուսանողների գերմաներենի մակարդակը թեսթավորման միջոցով |
| **Թեմա 2** | **Berufe und Familie** | | 2 | | Սովորել բառեր և բառակապակցություններ մասնագիտություն և ընտանիք թեմայով կարողանալ կիրառել երկխոսության մեջ |
| **Թեմա 3** | **Wohnen** | | 1 | | Սովորել բառեր և բառակապակցություններ բնակվել թեմայով կիրառել երկխոսության մեջ |
| **Թեմա 4** | **Tourismus** | | 1 | 1 | Սովորել բառեր և բառակապակցություններ զբոսաշրջություն թեմայով |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ներկայացնել սեփական բիզնես գաղափարներ, դիտել հոլովակ և քննարկել այն |
| **Թեմա 5** | **Einkaufen** | | 2 | | Սովորել բառեր և բառակապակցություններ գնումներ կատարել թեմայով, կազմել ճաշացուցակ և կատարել պատվերներ |
| **Թեմա 6** | **Stadtbesichtigung** | | 1 | | Սովորել բառեր և բառակապակցություններ քաղաքի այցելություն թեմայով |
| **Թեմա 7** | **Kultur** | | 1 | 1 | Սովորել բառեր և բառակապակցություններ մշակույթ թեմայով, ներկայացնել սիրված մշակութային իրադարձությունները, դիտել հոլովակ և քննարկել այն |
| **Թեմա 8** | **Sport und Fitness** | | 1 | | Սովորել բառեր և բառակապակցություններ սպորտ և ֆիթնես թեմայով, կազմել ձեր ֆիթնես պլանը |
| **Թեմա 9** | **Gesundheit und Krankheit** | | 2 | | Սովորել բառեր և բառակապակցություններ առողջություն և հիվանդություն թեմայով, կիրառել երկխոսության մեջ |
| **Թեմա 10** | **Arbeitsleben** | | 1 | 1 | Սովորել բառեր և բառակապակցոիթյուններ աշխատանքային կյանք թեմայով, նկարագրել ապագա աշխատանքը դիտել հոլովակ և քննարկել այն |
| **Թեմա 11** | **Im Restaurant** | | 1 | | Սովորել բառեր և բառակապակցություններ ռեստորանում թեմայով, կիրառել երկխոսության մեջ |
| **Թեմա 12** | **Firmenporträt** | | 1 | | Սովորել բառեր և բառակապակցություններ ֆիրմայի ներկայացում թեմայով, կիրառել երկխոսության մեջ |
| **Թեմա 13** | **Ernährung** | | 1 | 1 | Սովորել բառեր և բառակապակցություններ սնունդ թեմայով, ներկայացնել ուտելու |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | սովորույթները Հայաստանում և Գերմանիայում, խորհուրդներ տալ աօողջ սնունդի վերաբերյալ, դիտել հոլովակ և քննարկել այն |
| **Թեմա 14** | **Post und Telekommunikation** | | 2 | | Սովորել բառեր և բառակապակցություններ պոստ և հեռահաղորդակցություն թեմայով, կիրառել երկխոսության մեջ |
| **Թեմա 15** | **Medien** | | 1 | 1 | Սովորել բառեր և բառակապակցություններ լրատվամիջոցներ թեմայով, ներկայացնել տարբեր լրատվամիջոցներ, դիտել հոլովակ և քննարկել այն |
| **Ընդամենը՝ 24 ժամ, օ կրեդիտ** | | | | | |

**Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 4. Առաջին միջանկյալ | 0-6 |
| 5. Եզրափակիչ քննություն | 0-7 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-7 |

## Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ

**06/H01. Համեմատական սահմանադրական իրավունք 1** (4 կրեդիտ)

*Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրանտին ներկայացնել Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքը՝ որպես իրավունքի ճյուղ, գիտություն, ինչպես նաև (համեմատական սահմանադրական իրավունքի հետ միասին) որպես դասընթաց:

**Կրթական արդյունքները.**

**1. Կիմանա.**

- «Սահմանադրական իրավունք» և «պետական իրավունքն» հասկացությունների ընդհանրություններն ու տարբերությունները:
- Սահմանադրաիրավական հարաբերությունները և դրանց սուբյեկտները:
- Սահմանադրական իրավունքի աղբյուրները:
- Պառլամենտի դերն ու նշանակությունը իրավաստեղծ և քաղաքական գործընթացներում:
- Պառլամենտի տեղն ու դերը իշխանությունների բաժանման և հավասարակշռման համակարգում:
- Խորհրդարանի պալատների փոխգործակցության և փոխներգործության առանձնահատկությունները:
- Նորմաստեղծ համակարգի գործառնության առանձնահատկությունները արտասահմանյան երկրներում:
- Պառլամենտի գործունեության առանձնահատկությունները և իրավասության շրջանակը խորհրդարանական հանրապետությունում:
- Պատգամավորի իրավական կարգավիճակի առանձնահատկությունները:
- Պետության գլխի (միապետի, նախագահի) կարգավիճակն ու իրավասությունների շրջանակը:
- Գործադիր իշխանության գործունեության առանձնահատկություններն ու փոխհարաբերությունները իշխանության այլ ճյուղերի հետ:

• Դատական իշխանության սոցիալական դերը, կառուցվածքը և տեղը պետական իշխանության համակարգում:
• Դատական համակարգի կազմավորման և գործունեության սահմանադրաիրավական սկզբունքները:
• Արդարադատության իրականացումը դատարանների կողմից:
• ՀՀ Կառավարության օրինաստեղծ գործունեության և ՀՀ Ազգային ժողովի հետ փոխհարաբերության բնութագրիչ հատկանիշները:

**2. Կկարողանա.**

• Արդյունավետ կիրառել դասընթացից ստացված տեսական և գործնական գիտելիքներն ու փորձը մասնագիտական վերլուծություններ իրականացնելիս:
• Ուսումնասիրել օրինաստեղծ գործունեության հիմունքները, օրենսդիր մարմնի գործառնական հիմնադրույթները:
• Ներկայացնել օրենսդրական նախաձեռնության ընթացակարգերն ու պառլամենտի իրավասությանը վերապահված հարցերի քննարկման ընթացակարգերը:
• Կազմակերպել և մանակեցել ուսումնասիրվող թեմաների վերաբրեյալ քննարկումներին:
• Իրականացնել համեմատական վերծություն ՀՀ-ում ընթացող օրենսդրական բարեփոխումների, պառլամենտական զարգացումներ վերաբերյալ, հաշվի առնելով միջազգային փորձը:

**3. Կտիրապի**

• Մասնագիտական գրականությունն ինքնուրույն մշակելու, ներկայացնելու հմտություններին:
• Համադրական, վերլուծական կարողություններին և հմտություններին:
• Քաղաքացիական ակտիվ գիտակցությամբ քաղաքացուն բնորոշգիտելիքներին ու հմտություններին:

**Բովանդակությունը.**

| N | Բաժինը, թեման | Պարապունքների տիպը, ժամերի թիվը | | | Վերջնարդյունք |
|---|---|---|---|---|---|
| | | Դասախոսություն | Սեմինար, գործնական | Ինքնուրույն | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Թեմա 1** | **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃՅՈՒՂ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ** | **2** | | 18 | Մագիստրանտը կիմանա սահմանդրական իրավունքի,սահման ադրաիրավական հարաբերություններ ի առանձնահտկությու նները, ինչպես նաև կկիարողանա մասնակցել նշված թեմանորով քննարկումներին: |
| | Սահմանադրական իրավունքի ճյուղի հասկացությունը: «Սահմանադրական իրավունք» և «Պետական իրավունք»: Սահմանադրական իրավունքի առարկան և մեթոդը, նորմերը և ինստիտուտները: Սահմանադրաիրավական հարաբերությունները և դրանց սուբյեկտները: Սահմանադրական իրավունքի աղբյուրները: Սահմանադրական իրավունքի համակարգը: Սահմանադրական իրավունքի տեղը Հայաստանի Հանրապետության իրավունքի համակարգում, դրա զարգացման միտումները: Սահմանադրական իրավունքի գիտության առարկան, համակարգը, աղբյուրները: Սահմանադրական իրավունքի գիտության մեթոդները: Սահմանադրական իրավունքը որպես ուսումնական դասընթաց: Հայաստանի սահմանադրական իրավունքի | | | | |
| **Թեմա 2** | **ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ի ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈԴԵԼՆԵՐԸ.** | **2** | | 18 | Մագիստրանտը կիմանա սահմանադրության |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ժամանակակից մոդելներն ու սահմանադրության ընդունման, փոփոխման և դադարման բնութագրիչ գծերը և կկարողանա ակտիվորեն վերլուծել ՀՀ սահմանդրական բարեփոխումները: |
| | Սահմանադրության հասկացությունը, էությունը, իրավաբանական բնույթը: Սահմանադրության կարգավորման առարկան (օբյեկտը): Սահմանադրության տեսակները (դասակարգումը) և ձևերը: Սահմանադրության գործառույթները: Սահմանադրության գործողությունը ժամանակի և տարածության մեջ: Սահմանադրության ընդունման և փոփոխման կարգը (մշակում, ընդունում, փոփոխում, դադարում): | | | | |
| **Թեմա 3** | **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ** | **2** | | 18 | Մագիստրանտը կիմանա պետության կառավարման ձևի բնութագրիչ հատկանիշները, կտարբերի միապետության տեսակները հանրապետությա ն տեսակներից: |
| | Պետության կառավարման ձևը, Միապետություն և հանրապետություն: Պետության տարածքային կառուցվածքի ձևը, Ունիտար պետություն: Դաշնային պետություն: Ինքնագովություններ և | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | համադաշնություններ: Պետական ռեժիմի հասկացությունը և տեսակները: | | | | |
| **Թեմա 4** | **ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ** | **2** | | 18 | Մագիստրանտը կտիրապետի պառլամենտի, դրա մարմինների գործունեության առանձնահատկություններին: Ստացված գիտելիքների հիման վրա, մագիստարանտը կկարողանա իրականացնել համեմատական վերլուծություն ՀՀ ԱԺ գործունեության և արտասահմանյան երկների խորրիրդարանների գործունեության միջև: |
| | Պառլամենտի տեղն ու դերը պետական իշխանության բարձրագույն մարմինների համակարգում: Խորհրդարանի հասկացությունը և ներկայացուցչական բնույթը: Խորհրդարանի պառլամենտական բնույթը և պառլամենտարիզմը: Խորհրդարանի իրավասությունները: Խորհրդարանի իրավասությունների պատվիրակումը: Խորհրդարանի ակտերը: Խորհրդարանի կառուցվածքը: Պալատները և հանձնաժողովները: Խորհրդարանի պալատների | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | փոխգործակցության և փոխներգործության առանձնահատկությունները: Պառլամենտի գործունեության առանձնահատկությունները և իրավասության շրջանակը խորհրդարանական հանրապետությունում: Պատգամավորի սոցիալական նշանակությունը և կարգավիճակը: | | | | |
| **Թեմա 5** | ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ | **2** | | 18 | Մագիստրանտը կիմանա պետության գլխի (միապետի, նախագահի) կարգավիճակն ու իրավասություններ ի շրջանակը, ինչպես նաև գործադիր իշխանության գործունեության առանձնահատ-կություններն ու փոխհարաբերությա նները իշխանության այլ ճյուղերի հետ: |
| | Պետության գլխի հասկացությունը և տեղը պետական իշխանությունների համակարգում, Միապետը. նրա կարգավիճակը և իրավասությունները: Նախագահը, նրա կարգավիճակը և իրավասությունները: Նախագահի իրավասությունների առանձնահատկությո ւնները խորհրդարանական հանրապետությունում: Միապետի կամ նախագահի | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | լիազորությունների պատվիրակման հասկացությունն ու առանձնահատկությունները: Կառավարության հասկացությունը, նշանակությունը և տեսակները: Կառավարության կազմավորման կարգը, կազմը և իրավասությունները: Կառավարության գործունեության առանձնահատկությունները խորհրդարանական հանրապետությունում: | | | | |
| **Թեմա 6** | **ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ** | **2** | | 18 | Մագիստրանտը կիմանա դատական իշխանության գործունեության առանձնահատկություններն ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտասահմանյան երկներում և կկարողանա իրականցնել համեմատական վերլուծություն: |
| | Դատական իշխանության սոցիալական դերը, կառուցվածքը և տեղը պետական իշխանության համակարգում: Դատական համակարգի կազմավորման և գործունեության սահմանադրաիրավական սկզբունքները: Արդարադատության իրականացումը դատարանների կողմից: Սահմանադրական արդարադատության հասկացությունը և սոցիալական գործառույթը: «Սահմանադրական հսկողություն» և | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | «սահմանադրական վերահսկողություն»: Սահմանադրական դատարանների կազմավորման կարգը և լիազորությունները: ՀՀ Սահմանադրական դատարանի դերը խորհրդարանական կառավարման համակարգում: | | | | |
| **Ընդամենը՝ 120 ժամ, 4 կրեդիտ** | | | | | |

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ բանավոր ներկայացումներ, և ստուգողական գրավոր
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 8. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 9. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 10. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

**ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ՝ power point ներկայացումներ, դասախոսություններ, դասագրքեր, ուղեցույցներ, դերային խաղի նյութեր, և այլն:**

**06/H09. Իրավունքի աղբյուրների տեսագործնական հիմնախնդիրներ** (3 կրեդիտ)

*Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրանտին ներկայացնել և ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել Իրավունքի աղբյուրների, նրանց տեսակների, ինչպես նաև իրավունքի աղբյուրների հիման վրա՝ տարբեր իրավական համակարգերում իրավական ընտանիքների առանձնահատկությունների մասին:

